ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՇՆՈՐՀԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍՓՅՈՒՌՔԻՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՀՈԲԵԼՅԱՆԻ ԱՌԹԻՎ

Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության Ամերիկայի Կենտրոնական վարչության նախագահ պր. Աշեքս Մանուկյանը, հանուն Հ. Բ. Ը. Միության շնորհավորելով Վեհափառ Հայրապետի հոբելյանը, իր հոկտեմբեր 6 թվակիր նամակում գրել է.

«...Ձերդ Ս. Օծության ծննդյան հիսներորդ և գահակալության երրորդ տարեդարձի համազգային հանդիսության առիթով կմատչիմ համբուրելու Ձերդ Վեհափառության Ս. Աջը, որդիական սիրով և հարգանքով կմատուցանեմ սրտագին շնորհավորություններս այս բերկրալի զույգ առիթներով՝ մաղթելով արևշատություն Ամենայն Հայոց Հայրապետին, հաստատություն նախամեծար Մայր Աթոռ Ս. Էջմիածնին և պայծառություն ու բարեկարգություն Հայաստանյայց Առաքելական Ուղղափառ Եկեղեցվո։

Վեհափա՛ռ Տեր. Ձեր գահակալությունը դժբախտաբար զուգադիպեցավ մեր Եկեղեցվո ներքին փոթորկալից մեկ շրջանին։ Սակայն ժամանակը պիտի սպիացնե ամեն վերք՝ շնորհիվ հայրական այն իմաստուն ջանքերուն, զորս ցարդ ի գործ դրիք՝ վառ պահելու համար Ս. Լուսավորչի պլպլուն կանթեղը՝ ներշնչելով Հավատք, Հույս և Սեր Ս. Եկեղեցվո վայրավատին ժողովուրդին։

Ձերդ Ս. Օծության այս առաջին երեք տարիներու գահակալությունը թեև կարճ միջոց մըն էր, բայց կատարված վիթխարի աշխատանքը և ձեռք բերված գովելի արդյունքը բազմիցս երեք տարիներու կկարոտեին։

Իսկ Ձերդ Վեհափառության ծննդյան հիսներորդ տարեդարձը մեծապես կխանդավառե բոլորս նկատել այս սկզբնավորությունը մի երկրորդ 50 տարիներու քաջառողջ, կայտառ ու գործոն կյանքի, հորում Աստուծո օգնականությամբ մաղթենք, որ իրականանան Ձերդ Վեհափառության բոլոր երազները, գործադրվին բոլոր ձեռնարկները և ի վերջո վերահաստատվի բաղձալի միասնականությունը Հայաստանյայց Ս. Եկեղեցվո մեջ»։

Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության Եվրոպայի Կենտրոնական հանձնաժողովի և Գործադիր ժողովի անունից ուղարկվել էր 26 սեպտեմբեր թվակիր հետևյալ շնորհավորական նամակը.

«Վեհափա՛ռ Տեր.

Ձերդ Վեհափառության ծննդյան հիսներորդ և գահակալության երրորդ տարեդարձը, որ հանդիսավորապես կտոնվի 12 հոկտեմբերին Ս. Էջմիածնի Մայր Աթոռի և անոր հավատարիմ բոլոր հայ եկեղեցիներու կողմն ի սփյուռս աշխարհի, երջանիկ պատեհություն մըն է մեզի համար, ներկայացնելու մեր ջերմ շնորհավորությունները և բարեմաղթությունները։

Կեդրոնական հանձնաժողովս ուրախ է հաստատելով, որ Ձերդ Վեհափառության գահակալությունը նոր շրջան մը բացավ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցվո համար, հոգևոր վերազարթնումով և եկեղեցական շինարարությամբ։

Ձերդ Վեհափառության հովանավորությամբ, Ս. Էջմիածնի Ճեմարանը կհասցնե հոգևորականներու նոր սերունդ մը, և ներքին թեմերը կօժտվին եկեղեցական կազմակերպությամբ և հոգևոր առաջնորդներով, Ս. Էջմիածնի Մայր Տաճարի պատմական վանքերը կվերանորոգվին և հետզհետե ավելի թվով եկեղեցիներ կվերաբացվին, հուրախություն հավատացյալ հայ ժողովուրդին։ Այս արդյունքները ձեռք բերելով, Ձերդ Վեհափառությունը արժանավոր հաջորդը կհանդիսանա մեր բազմերախտ հայրապետներուն։

Կմաղթենք, որ Ձերդ Վեհափառությունը ապրի շատ երկար տարիներ, որպեսզի ավելի ծավալ ստանան ցարդ դրսևորված արդ-

դյունքները մեր Եկեղեցվո պայծառության համար, և նորանոր գործերով պսակվին իր ազգանվեր ջանքերը, վստահ որ արտասահմանի հայ գաղութները սրտագին նվերներով զորավիգ պիտի ըլլան անոնց։ Հ. Բ. Ը. Միությունը, ինչպես անցյալին, այսուհետև ևս պիտի չթերանա Ս. Էջմիածնի Մայր Աթոռին և անոր ազգընտիր Գահակալին հանդեպ իր հավատարմության և նվիրումին մեջ»։

Եգիպտոսում հրատարակվող «Ջահակիր» պարբերաթերթի շուրջ հավաքված Եգիպտոսի հայ մտավորականության անունից պր. Հայկ Ժամկոչյանը, «Էջմիածին» ամսագրի խմբագրությանն ուղղած իր սեպտեմբեր 30 թվակիր նամակում գրել էր.

«Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ. Տ. Վազգեն Ա Հայրապետի ծննդյան հիսնամյա և գահակալության երրորդ տարեդարձի հոբելյանին առթիվ, «Ջահակիր» եգիպտահայ պարբերաթերթի շուրջ հավաքված երեց և մանավանդ երիտասարդ մտավորականության կողմե կփութամ ներկայացնել, ձեր միջոցով ևս, ջերմ շնորհավորություններ և որդիական անկեղծ մաղթանքներ։ Թող Երկնավորը և Իր Միածին Որդին առողջություն և բեղուն գործունեություն շնորհեն մեր սիրելի Հայրապետին, որուն կոչումն ու դերը անհունորեն մեծ և պատմական կշիռ ունեցող հանգամանքներ են այս գորշ օրերուն։ Համայն Սփյուռքահայության ակնարկը դարձած է դեպի Ս. Էջմիածին և Սովետական Հայրենիքը, այնտեղ միայն տեսնելով մեր ցեղին ապագային փրկությունը։ Առանց Հայրենիքին ու Ս. Էջմիածնին, մենք դատապարտված պիտի ըլլանք կորուստի։

Ու Վեհափառին հոբելյանը առիթ մը ևս կհանդիսանա այս անողոք ու վերջնական ճշմարտությունը կրկին անգամ շեշտելու սփյուռքահայ զանգվածներու գիտակցության մեջ և առ այդ գոտեպնդվելու դեպի նոր ուխտառություն, անտեղիտալի հավատքի և անխորտակելի հավատարմության համար, ի Ս. Էջմիածին և ի Մայր Աթոռ։

Կխնդրեմ, որ բարի ըլլաք եգիպտահայ մամուլի խորունկ ակնածանքները դուք ևս ներկայացնել Վեհափառ Հայրապետին, Իր հոբելյանի բարեբաստիկ եղելության առիթով։ Երկինք վարձատրե նաև Սովետական լայնախոհ և հոգածու իշխանությունները, որոնք ազատություն և կարելիություններ կշնորհեն հայության, իր հավատքին ծառայելու անվաշկանդ կերպով։ Հայությունը ապերախտ ժողովուրդ չէ և իր աշխատավոր զավակներուն, իր Եկեղեցիին, իր Կաթողիկոսին և բոլոր եկեղեցականներուն ընծայված այս բարեկամությունն ու պատիվը երբեք պիտի չմոռնա։

Կեցցե՛ ուրեմն մեր Վեհափառ Հոբելյարը...»։